Պաշտոնական նամակ
Երևանի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին
իրազեկման նպատակով

Երևան քաղաք

Թեմա. «Այբ Արարատ» երիտասարդական մշակութային նախաձեռնության խաղաղ հավաքի իրազեկում

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածը և ՀՀ «Հավաքների ազատության մասին» օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածները՝ տեղեկացնում ենք, որ «Այբ Արարատ» երիտասարդական նախաձեռնությունը նախատեսում է անցկացնել խաղաղ մշակութային հավաք (պիկետ)՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վարչական շենքի դիմաց:

Հավաքի նպատակն է՝

Խաղաղ և մշակութային ձևով պահանջել կրթության և մշակույթի ոլորտների պատասխանատուներից՝
• ապահովել, որ Մեսրոպ Մաշտոցի «Այբ» տառն, որպես հայ գրի սկիզբ և ինքնության խորհրդանիշ, վերադառնա հայոց այբենարանի առաջին էջում իր արժանի տեղին,
• ընդգծել, որ Արարատ լեռը հանդիսանում է հայ ժողովրդի հավերժության, հավատքի և գենետիկ ինքնության խորհրդանիշը, և այն չպետք է դիտվի որպես սահմանային կամ քաղաքական տարր, այլ՝ որպես մշակութային և պատմական արժեք, որը պետք է պահպանվի մեր պետական խորհրդանիշներում:

Հավաքը կրում է բացառապես մշակութային և հասարակական բնույթ, առանց որևէ քաղաքական ենթատեքստի:

Հավաքի տվյալները՝
• Վայրը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության վարչական շենքի դիմաց (Երևան, Վ. Սարգսյան 3)
• 23.10.2025թ Հունվարյան 10:00-ից մինչև 18:00
• Տևողությունը՝ մինչև ԿԳՄՍ նախարարության կրթության և մշակույթի գծով պատասխանատու ներկայացուցիչները ընդունեն նախաձեռնության ներկայացուցիչներին և քննարկեն ներկայացված պահանջները:
• Մասնակիցների նախնական թիվը՝ մոտ 100 մարդ, սակայն հնարավոր է, որ հավաքին միանան նաև հայեցողական կարգով այլ քաղաքացիներ:
• Տեխնիկական միջոցներ՝ բարձրախոսներ և պաստառներ
• Հավաքի պատասխանատուներ՝
• Մեսրոպ Հովհաննիսյան՝ «Այբ Արարատ» նախաձեռնության համակարգող

Հավաքի նպատակը խաղաղ է, միտված է մշակութային արժեքների պահպանմանն ու հանրային իրազեկմանը: Մենք չենք նախատեսում երթ կամ երթուղու փոփոխություն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրում ենք օրենքով սահմանված կարգով գրանցել տվյալ իրազեկումը և տեղեկացնել ոստիկանությանը՝ հավաքի անվտանգությունն ապահովելու նպատակով:

Մեսրոպ Հովհաննիսյան
«Այբ Արարատ» երիտասարդական նախաձեռնության համակարգող
14.10.2025 թ.